Պարենային Կտրոնների Մասին Տեղեկություն

Պարենային կտրոնների ծրագիրը օգնում է քիչ եկամուտ ունեցող մարդկանց որ ուտելիք գնեն: Այս դաշնակցային ծրագիրը իրականացվում է նահանգային կամ տեղական գործակալությունների կողմից:

Ո՞վ կարող է ստանալ պարենային կտրոններ

Որեւէ մի անձ կարող է դիմել պարենային կտրոնների համար: Պարենային կտրոններ ստանալու համար դուք եւ ձեր ընտանիքի անդամները պետք է բավարարեք որոշակի պայմաններ: Ձեր ընտանիքի անդամներից յուրաքանչյուրը պետք է ունենա Սոցիալական Ապահովության համար կամ դիմի այդ ստանալու, լինի Ամերիկայի Միացեալ Նահանգների քաղաքացի կամ հպատակ, կամ էլ ունենա իրավասու ոչ քաղաքացու կարգավիճակ: Հետեւյալ իրավասու ոչ քաղաքացիները բավարարում են պարենային կտրոններ ստանալու պահանջները առանց սպասման ժամանակամիջոցի՝

- 18 տարեկանից ցածր տարիքի օրինական ներգաղթյալ (legal immigrant) երեխա.
- Կույր կամ հաշմանդամ օրինական ներգաղթյալներ, որոնք ստանում են հաշմանդամության օգնություն կամ նպաստներ.
- Ովքեր որոնք օրինականօրէն բնակել են Ամերիկայի Միացեալ Նահանգներում Օգոստոսի 22, 1996-ին՝ լինելով այդ թվում 65 տարեկան կամ ավելի.
- Օրինական մշտական բնակիչներ (lawful permanent residents), որոնք Ամերիկայի Միացեալ Նահանգների զինվորական ուժերի ներկա ծառայության տակ են (կամ էլ հրաժարվել), նրանց ամուսինը, կինը եւ երեխան.
- Քաղաքական ապաստանյալներ (refugee), որոնք ընդունվել են Ներգաղթի եւ Հպատակագրման Որոշման (INA) 207 օրենքի տակ.
- Ապաստանյալներ (asylee) որոնք ընդունվել են ըստ Ներգաղթային եւ Հպատակագրման Որոշման (INA) 208 բաժնի.
- Աքսորյալներ (deportees) կամ վտարման որոշումի տակ եղող անհատներ որոնց հեռաձումը չպարտադրվում (removal withheld) ըստ Ներգաղթի եւ Հպատակագրման Որոշման 234(h)-ի կամ 241(b)(3) բաժինների.
- Կուբայից կամ Հայիթիից ժամանողներ ըստ 1980 թվականի Քաղաքական Ապաստանյալների Կրթական Օգնության 501(e)-օրենքի.
- Ամերիկա-Ասիական ներգաղթյալներ ըստ 1988 թվականի Արտաքին Գործունեությունների , Ելեմտական Արտածումի եւ այլ Ծրագիրների Իրացման Որոշումի 584 բաժնի.

Հետեւյալ օրինական ոչ քաղաքացիները սպասպան ժամանակամիջոցի կարիք չունեն, նույնիսկ եթե նրանք ոչ իրավասու օտար քաղաքացիներ են՝

- Հմոնգի կամ Լեռնային Լաոսի ցեղերի անդամներ (ներառյալ իրենց ամուսինները, կիներն ու երեխաները), որոնք օգնել են Ամերիկայի Միացեալ Նահանգների զինվորականներին Վիյեդնամի պատերազմի ընթացքում.
- Կանադայում ծնված Ամերիկյան Հնդիկներ.
- Հնդկական ցեղերի անդամներ ըստ Հնդկական Ինքնորոշման եւ Կրթական Օգնության Որոշումի 450b(e) բաժնի:

Հետեւյալ օրինական ոչ քաղաքացիները իրաւասու են, եթե նրանք համապատասխան կարգավիճակով հինգ տարվա ընթացքում ապրել են Ամերիկայի Միացեալ Նահանգներում՝

- Օրինական մշտական բնակիչներ (նրանք կարող են իրավասու լինել հինգ տարուց առաջ, եթե ունեն աշխատանքային 40 վարկեր).
- Օտար երկիրներից ազատ արձակված անհատներ (parolee) (որոնք իրաւասու են բնակելու Ամերիկայի Միացեալ Նահանգներում առնվազն մեկ տարի, ըստ Ներգաղթի եւ Հպատակագրման Որոշման 212(d)(5) բաժնի).
- Պայմանական ժամանողներ (conditional entrant), Ապրիլ 1, 1980 թվականից առաջ հաստատված ըստ Ներգաղթի եւ Հպատակագրման Որոշման 203(a)(7) բաժնի.
- Այն ծնողը, ամուսին կամ երեխա որ շարունակաբար կենդարկուի հարուածի, որ նաեւ դիմումնագիր ներկայացուցած է Ներգաղթի եւ Հպատակագրման Որոշման հետեւյալ բաժինների համար՝ 204(a)(1)(A)-ի կամ (B)-ի կամ 244(a)(3)-ի:

18-ից մինչեւ 60 տարեկան աշխատունակ մարդկանց մեծամասնությունը պարենային կտրոններ ստանալու պահանջներին բավարարելու համար պետք է աշխատելու պատրաստ լինեն: Շատ մարդկանցից կարող է պահանջվել, որ մասնակցեն ուսուցման կամ աշխատանքային ծրագիրներու: Համալսարանի որոշ ուսանողներ նույնպես կարող են իրավասու լինել:

Դրամական Միջոցներ

Ընդհանրապես ձեր ընտանիքի դրամական միջոցները պետք չե 2,000 դոլարից ավել լինեն: Սակայն, եթե ձեր ընտանիքի անդամներից մեկը 60 տարեկան կամ ավելի է եւ կամ հաշմանդամ, ձեր միջոցների սահմանը լինում է 3,000 դոլար: Լրացուցիչ Ապահովության Եկամուտ (SSI) կամ Կարիքավոր Ընտանիքների Ժամանակավոր Օգնության (TANF) նպաստներ ստացողների միջոցները հաշվի չեն առնվում: Միջոցները ընդգրկում են կանխիկ դրամ, դրամատան հաշիվներ եւ այլ կալուած:

Ձեզ պատկանող բոլոր միջոցները հաշվի չեն առնվում: Օրինակ, ձեր տունը եւ այն հողը, որի վրա տունը գտնվում է, հաշվի չեն առնվում պարենային կտրոններ ստանալու պահանջներին բավարարելու համար: Անձնական եւ բեռնատար ինքնաշարժեր հաշվի են առնվում նայած դրանց օգտագործման ձեւից: Նահանգների մեծամասնությունում օգտագործվում է Ժամանակավոր Օգնություն Կարիքավոր Ընտանիքների (TANF) ինքնաշարժի կանոնները պարենային կտրոնների կանոնների փոխարեն, եթե Ժամանակավոր Օգնություն Կարիքավոր Ընտանիքների կանոնները ավելի շահավետ են պարենային կտրոններից օգտվող ընտանիքի համար:

Եկամուտի սահմաններ ալ կան պարենային կտրոններ ստանալու դիմում ընողների համար: Որոշակի հասոյթ եկամուտ չի համարվում եւ կարող է նվազեցնել ձեր եկամուտից: Եկամուտի այլ բացարություններ ալ կան այն ընտանիքների համար որոնք ունեն 60 կամ ավելի տարիք ունեցող անդամ եւ կամ մի հաշմանդամ: Եկամուտի սահմանաչափերը կը տարբերին ընտանիքի չափից եւ կարող են փոփոխվել յուրաքանչյուր տարի:

(շրջել)

Ի՞նչպես կարող եք դիմել պարենային կտրոնների համար

Պարենային կտրոն ստանալու դիմումնագիրները մատչելի են Սոցիալական Ապահովություն բոլոր գրասենյակներում: Եթե դուք եւ ձեր ընտանիքի յուրաքանչյուր անդամ **դիմում է** կամ արդեն **ստանում է Լրացուցիչ Սոցիալական Եկամուտի (SSI)** վճարումներ, Սոցիալական Ապահովության ցանկացած գրասենյակում ձեզ կօգնեն լրացնելու եւ ուղարկելու պարենային կտրոն ստանալու դիմումնագիրը:

Մնացյալ բոլոր անհատները, ներառյալ նրանք ովքեր **դիմում են** կամ **ստանում են միայն Սոցիալական Ապահովության նպաստներ**, պետք է ստանան եւ ուղարկեն իրենց պարենային կտրոնի դիմումնագիրը պարենային կտրոնի տեղական գրասենյակ կամ այդ Սոցիալական Ապահովության գրասենյակը, որտեղ աշխատում է պարենային կտրոնի պաշտօնյան:

Տեսակցության ժամանակ դուք նաեւ պետք է ունենաք՝

- Ինքնության փաստաթուղթ, օրինակ՝ վարորդական իրավունք, նահանգային ինքնության փաստաթուղթ, ծննդյան վկայական կամ Ամերիկայի Միացեալ Նահանգներում օրինական գտնվելու ապացույց.
- Եկամուտի ապացույց, օրինակ՝ վարցատրության կտրոններ, Սոցիալական Ապահովություն, Լրացուցիչ Սոցիալական Եկամուտ կամ ձեր ընտանիքի յուրաքանչյուր անդամի կենսաթոշակ.
- Երեխաների խնամքի համար ծախսվող գումարների ապացույց.
- Վարձավճարների ստացականներ կամ գրավաթղթերով վճարումների ապացույց.
- Տնտեսային սպասարկման վարձերի (utility bills) վճառման կտրոններ.
- Բժշկական հաշիվներ՝ ձեր ընտանիքի 60 եւ ավելի տարիք ունեցող անդամի համար, ինչպես նաեւ նրանց, որոնք ստանում են կառավարական նպաստներ, օրինակ Սոցիալական Ապահովություն կամ Լրացուցիչ Սոցիալական Եկամուտ, իրենց հաշմանդամության պատճառով:

Որքան դուք կարող եք ստանալ

Դուք կարող եք ստուգել թե որքան պարենային կտրոններ կարող եք ստանալ ստորեւ նշված կայքէջի միջոցով՝ *www.foodstamps-step1.usda.gov*:

Սոցիալական Ապահովության հետ կապ հաստատել

Հաւելյալ տեղեկության համար, այցելեցեք մեր կայքէջը, *www.socialsecurity.gov* ուր նաեւ կարող եք գտնել մեր վերջին հրատարակությունները: Կարող եք նաեւ զանգահարել հետեւյալ անվճար թվին **1-800-772-1213** (խուլերը եւ դժուար լսողները թող զանգահարեն հետեւյալ հատուկ TTY թվին **1-800-325-0778**): Ինքնաշխատ հեռաձայնային ծառայությամբ, մենք որոշ հարցերի կարող ենք պատասխանել եւ տեղեկություններ հայթայթել օրը 24 ժամ:

Եթե թարգմանիչի Պետք Ունեք. Մենք ձեզ համար անվճար թարգմանիչ կարող ենք տրամադրել որպեսզի դուք կարողանաք մեզ հետ ձեր գործերը կատարեք: Այս թարգմանչական ծառայությունը կարող եք գտնել մեր գրասենյակներում եւ հեռաձայնի վրայ: Զանգահարեցե՛ք մեզ հետեւյալ թվին **1-800-772-1213** եւ ճնշե՛ք թիւ մէկը: Հեռաձայնը պատասխանող ներկայացուցիչը միացնում է ձեզ թարգմանիչի հետ որպեսզի ան օգնէ ձեզի: Եթե չ՛կարողացանք հեռաձայնով օգտակար լինել, ժամադրություն ենք տալիս որպեսզի դուք այցելեք ձեր տեղական գրասենյակը որտեղ ներկայ կը լինի նաեւ թարգմանիչը:

Մենք բոլոր խօսակցությունները գաղտնի պահում ենք: Ուզում ենք նաեւ վստահ լինել, թէ դուք ստանում եք ճշգրիտ տեղեկություն ու քաղաքավար ծառայություն: Այս պատճառով, Սոցիալական Ապահովության երկրորդ ներկայացուցիչ մը հսկում է որոշ խօսակցությունները:

Պարենային կտրոններ

Սոցիալական Ապահովության գրասենյակում մատչելի է օգնություն, տեղեկություն եւ դիմումնագիր

Արդյո՞ք դուք միայն Սոցիալական Ապահովության նպաստներ ստանում եք, կամ միայն դրա համար ուզում եք դիմել:

ՊԱՐԵՆԱՅԻՆ ԿՏՐՈՆԻ ԴԻՄՈՒՄՆԱԳԻՐԸ ԴՈՒՔ ԿԱՐՈՂ ԵՔ ՍՏԱՆԱԼ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՑԱՆԿԱՑԱԾ ԳՐԱՍԵՆՅԱԿՈՒՄ

Մենք չենք կարող ընդունել պարենային կտրոնի դիմումնագիրներ այն մարդկանցից, որոնք ստանում կամ դիմում են միայն Սոցիալական Ապահովության նպաստների համար:

Արդյո՞ք դուք միայն Լրացուցիչ Ապահովության եկամուտ (SSI) ստանում ե՞ք, կամ միայն դրա համար ուզում եք դիմել:

ՊԱՐԵՆԱՅԻՆ ԿՏՐՈՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԴՈՒՔ ԿԱՐՈՂ ԵՔ ԴԻՄԵԼ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՑԱՆԿԱՑԱԾ ԳՐԱՍԵՆՅԱԿՈՒՄ, ԵԹԵ ԴՈՒՔ ԵՎ ՁԵՐ ԸՆՏԱՆԻՔԻ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ԱՆԴԱՄ ՍՏԱՆՈՒՄ ԿԱՄ ԴԻՄՈՒՄ Է ԼՐԱՑՈՒՑԻՉ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԵԿԱՄՈՒՏ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ:

Մենք կ՛օգնենք ձեզ լրացնել պարենային կտրոնի դիմումնագիրը: Դիմելու համար անհրաժեշտ չէ գնալը պարենային կտրոնի գրասենյակ:

www.socialsecurity.gov

Social Security Administration
SSA Publication No. 05-10101-AM
Food Stamp Facts (Armenian)
September 2004